



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ . ՄՈՒՎԵՐՅԻՆ, ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

24/01/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արտաշ Այվազյանը, Նարինե Գրիգորյանը, Սմբատ Սմբատյանը,
Վալոդյա Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

24/01/2019թ.թիվ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

Հաստատել 24/01/2018 թ. թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. 2019թ-ի համայնքային բյուջեն հաստատելու մասին :
2. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին :
3. Ավագանու 05.08.2016թ-ի թիվ 50 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :
4. Համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին :
5. Վարդան Բաբայանին << Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համար համաձայնություն տալու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.134հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
7. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0018հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
8. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00112հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին

